Հայտարարություն

ՀՀ Շիրակի մարզի «Կրաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ «անգլերեն» (4 դասաժամ), «երաժշտություն» (6 դասաժամ), «ԹԳՀԳ» (4 դասաժամ), «դասվար» (13 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղի համար:Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար (3 x 4) չափի
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
5. ինքնակենսագրություն (Ձև 5)
6. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ սեպտեմբերի 5-ից մինչև 2025թ սեպտեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ սեպտեմբերի 18-ին ժամը 10-00-ին ՀՀ Շիրակի մարզի Կրաշենի հիմնական դպրոցում, հասցե՝ Ախուրյան համայնք գ. Կրաշեն 3/3:

Տեղեկությունների համար զանգահարել 077588407 հեռախոսահամարով: